

Թաւրիգում 14 դրան
Գաւառներում 20 դրան

Ա Ր Տ Ա Ս Ա Ն Ն Մ Ա Ն

Ռուսաստան 4 րբ. 50 կ.
Թուրքիա 50 դրուշ
Եւրոպա 12 ֆրանկ
Ամերիկա 2 տոլար 5 ս.

Յայտարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Զորքող " " " 3 "

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիգ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողները խնդրում են գրել պարզ, մաքուր և անպայման քղբի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոխադրելու և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք յուր և յով ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ - ուսով:
4. Չսպուած կարճ յօդուածները չեն վերագրւում: Ուղարկուած և չսպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պոստի ծախսով:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն պիտի է համարում պատասխանատու թիւնից:
7. Չսպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

«ՎԱՅ ՅԱՂԹՈՒՈՂՆԵՐԻՆ»

Պատմութիւնը միշտ կրկնուում է: Եւ այն ժողովուրդները, որոնք չեն խրատուում նրա դասերից, անխուսափելիօրէն արժանանում են դառն ճակատագրերի:

Մի քանի րոպէով յետահայեաց ակնարկ ձգենք դէպի հին Հռոմի անցեալը:

Պատերազմաւէր ու լեռնական Գալլերը Խալկիոյ հիւսիսից մինչև Տիրեք նուաճելով ամեն ինչ, անարգել հասնում և առնում են Հռոմին:

Հռոմի մայրցիւղը իբրեւ վերջին ապաստան՝ ընտրում են Կապիտոլիոնը և ամրանում այնտեղ: Սակայն պաշարումը [389 Ն.Ք.] երկար տևելով՝ սովորաբար Հռոմի էացոց ստիպում է ի պատասխան յաղթողի առաջարկի, տալ 1000 լիտր ոսկի:

Ոսկին կշռելիս Գալլերը խարդախութիւն են անում: Պարտուած Հռոմի էացիք արդարութիւն գտնելու համար՝ գանգատով դիմում են թշնամու խրոխտ զօրավար Բրեննոսին:

Վերջինս յաղթողի իրաւունքը աւելի ևս սրբագործած լինելու համար, դեռ իւր սուրն էլ հանում զնում է կշեռքի ծանր թաթում և գոռոզաբար ասում.

«ՎԱՅ ՅԱՂԹՈՒՈՂՆԵՐԻՆ»:

Ահա միշտ այս և այսպիսի պատասխաններ են հնչում ու հնչում բռնաւորների կողմից բոլոր նրանց գլխին, ովքեր մի անգամ անհաբեք են գտնուել դէպի իրենց դատն ու իրաւունքը, ովքեր միամտաբար ձեռքից տուել են ամեն ինչ և օրինականացրել երկաթեայ գաւազանի իշխանութիւնը բռնաւորի:

Բռնաւորը միայն դրսեցին-օտարը չի լինում: Բռնաւոր է և արիւնակիցը, երբ նա իւր կազմակերպուած ոյժով դալիս խլում է հասարակութեան սեպհականութիւնները և ծառայեցնում դրանց իւր նեղ, շատ նեղ կուսակցական շահերին:

Մի անգամ որ ժողովուրդն իւր դիրքը, իւր ոտքի տակի հողը զիջեց այդ ոյժին, այլ ևս նա ըստ-

րուկ է, նա գուրկ է իւր հաւաքաչան աշխատանքով դիզածներից ու կառուցածներից և միշտ այնուհետև նրա գլխին ձօճելու է յաղթողի սուրը և Բրեննոսեան այս սպառնալիքը.

—Վայ յաղթողներին:

Շատ հեռու չերթանք: Վերջինիք փաստը մեր աչքի առջև:

Ինչ էր Լիւաւի դպրոցը մինչև 1900 թիւը և ի՞նչ է նա այժմ:

—Մի ժամանակ այդ դպրոցն էլ ծաղկում էր, հարուստ էր և կայուն, որովհետև իշխում էր այնտեղ *frshif-wefisawmf* քափած, սրբազաւ և *hruiawstr* հասարակութիւնը ի գէժս իւր ընտրեալ հոգաբարձուներին:

Սակայն եկան անգղերը, եկան գառնագլուխ գայլերը մեղրանոյշ խօսքերով, գտան զինակիցներ ժողովրդի պարզամիտ դասի և ոգևորիչ գաղափարներով արագ յափշտակուող երիտասարդութեան մէջ:

Այսպիսով ոտքի տակի հողն ամրացնելուց յետոյ՝ նոյն եկուորները բռնուցքի ոյժով հեռացրին ժողովրդին և նրա ներկայացուցիչներին: Հեռացրին, որովհետև այլ ևս այդ նորեկները, «ազգասէրներ»-ը պէտք չունէին ոչ ժողովրդին և ոչ էլ ազաններին, զի կար դրամ՝ դպրոցն աւելի «կարեւոր» միասնայի ծառայեցնող և նրա դրամները ալ ու ձախ շռայլող այդ քանակի համար:

Ուշ արթնցած, ձեռքից ամեն ինչ արդէն տուած ժողովուրդը ի տես այս ապօրինութեանց և վատնումների՝ ընտրութիւններին երբ բողոքի փորձեր արեց, ապա փայլել սկսեցին մեր նորագոյն Գալլերի-մարզուած «տղերը»-ի մահաոխիթ գէնքերը և հնչուեցան նոցա ահաբեկիչ ռազմագոյները՝

—Վայ խօսողներին:

Եւ ում համար թանգ էր իւր կեանքը, նա իմաստութիւն էր համարում լռել, որովհետև յաղթութեան, ստրկացուածին միայն լուռութիւնն է բաժին:

Սակայն ոչ մի ոյժ և բռնութիւն յարատե չէ: Տառն և աւելի տարիների անպատասխանատու գործունեւութիւնը ստեղծեց ան-

կանգնելի մի անկում թէ նոցա—այդ բռնաւորների-և թէ ժողովրդի դպրոցի համար:

Երբ իսպառ շոգիացան ժողովրդի անձեռնմխելի դրամները, երբ այլ ևս ոչինչ չմնաց հանգիստ մարտիւ համար, մեր անգղերը լռելեայն և առանց նախկին «յայտնի» պայքարի՝ յետ քաշուեցան այս վերջին օրերը և «ամենայն խաղաղութեամբ» թոյլ տուին, որ նորէն ժողովուրդն ու ազանները գան և կոպէկ առ կոպէկ դրամ՝ դիզելով վերաշինեն այն սրտամորմոք և ահուկի աւերակները, զորս «համերաշխութիւն» անուան տակ՝ այսօր այդ աճալարները—այդ հասարակական ոճրապարտները, դաշնակցած ինքնատիպ և զաճաճ մարքսիստների հետ—աշխատում են ծածկել և չրթողներ ու տեսնուի:

Հասարակական այդ յանցապարտները, ոսկեգօծուած բառերով, սակայն ծուռ ու օճապտոյտ ճանապարհներով մօտենում են այժմ Զալայի դպրոցներին:

Դուք, Զալայցիներ, զգոյշ և արթուն: Մի գիշէք ձեր գիրքը, ապա թէ ոչ՝ ձեր գլխին էլ կկարգացուի

—Վայ յաղթողներին—ստորացուցիչ դատաւճիռը:

Այդ յանցապարտների մօտիկ անցեալը ձեզ փաստ, ձեզ գրաւական ու խրատ, որ նրանց միակ նպատակը ձեր դպրոցների ունեցած մի քանի թումաններն են: Ահա այդ պատրաստի թումանները—որպէս Լիւաւում - մաքրագարելուց յետոյ, նորա կիռչեն այլ գէշեր որոնելու: Նորանց ինչ հոգալ, որ ձեր գաւառները փողոցները կմնան: Բաւական է այսօր և վաղը տաք մնան նոցա ստամոքսները:

Միշտ պատրաստ և արթուն կացէք, յետ մղելու այն վատնիչներին և կործանարարներին, որոնք դեռ մեր իսկ աչքի առաջ ողբալի աւերակներ ստեղծելուց յետոյ, այնուամենայնիւ երես ու խիղճ ունին, առանց կարմրելու, ճառելու դպրոցների «բարձրացումից», «յառաջդիմութեան շաղի մէջ զննուլուց», և իմ սրբապօղութիւն նաև . . . «համերաշխութիւնից» . (!)

Ինչպէս որ մի երկնային ձայն Գորեր լեռը հօտն արածելու բարձրացող Մովսիսին սուաց.

—Այս տեղը սուրբ է, արձակելը կօշիկներդ:

Այդպէս էլ Զալայցիները լաւ ճանաչելով թայֆային և նրա խլուրդային գործունեւութեան ողջ գաղտնիքը՝ միշտ պատրաստ պէտք է լինին ասելու.

—Ինչքան ժողովրդի բռնաւորներ, դուք որոնց երկրահայեաց գլխի վերև սաւառնում են ժամհարեաններին, Թարխանեանների, Մհերների և Տէր Օհանեանների անհաւաք ստորուականները, դուք դպրոց անանկացողներ և հասարակական դրամներ վատնողներ, հեռու Զալայից: Սա այն Գորերն է, որը դուք չպէտք է պղծէք ոտնակոխելով այն: Լուսոյ և գիտութեան տաճարները տեղ չունին այն «սրտացաւ գործիչներին» համար, որոնք միայն նրանց հիմքերը փորելու ընդունակ են և սերունդ ալլասերելու: Հասարակական խիղճը յոգնած և վրդվուած է ձեզնից և ձեր տխրահուշակ ինամականութիւնից:

ՏՕՄԱՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՌՈՒՄ

Այս ամառ Ժնևում, միջազգային մի կօնգրէս տեղի պէտք է ունենայ համամարդկային մի տօմար կազմելու համար, որպէս զի տօմարական թիւրիմացութիւնները և դրանցից յառաջացած բազմադիմի դժուարութիւնները բոլորովին վերացուեն:

Պարոն Լըրօյ Բօյտ մի առաջարկ պիտի ներկայացնի այդ կօնգրէին, որի համաձայն տարին 13 ամիսների պէտք է բաժանել, իւրաքանչիւրը 28 օրից բաղկանալու պայմանով (13×28=364 օր): Պակաս մնացած մի օրը ոչ մի ամսի վրայ աւելացնելու հարկ չկայ, այլ դա նոր տարու օրն է լինելու բացառիկ կերպով:

Յաւելեալ նոր կամ 13-րդ ամիսը «ՍՕԼԱՐԻ» պիտի կոչուի և Յունիս—Յուլիս ամիսների միջև պիտի գետեղուի:

Բացի դրանից նպատակ կայ նաև ԶԱՏԿԻ տօնը հաստատ մի օրուայ հետ կապելու, նման ՄՆՆԴԵԱՆ տօնին, որ, ինչպէս յայտնի է, միշտ Դեկտ. 25-ին է պատահում:

Իհարկէ մեզ հայերիս համար այս տեսակի (և ամեն տեսակի պէտք է ասած) բարեփոխումներ ոչ մի նշանակութիւն էլ չունեն, քանի որ մեր տխմարութեան և համարապարտութեան պատճառով մեր տխուր ճակատագիրն է եղել «Անդ կացցես և զլոյս մի տեսցես» դատաւիճիլը:

Մ. Պ.

ԷՔՍՇԱՀԸ

Մամադ-Ալի Շահը Օղեստայում մի տեսակ վանական կեանք է վարում, ոչ թղթակից է ընդունում, ոչ ժողովրդի հետ տեսնում, ոչ էլ ժողովուրդը հետաքրքրում է իմանալու—ինչպէս առաջ հետաքրքրում էր—թէ Շահը ինչ է անում:

Այստեղ վերադառնալուց յետոյ նրան մի քանի անգամ այցելած է քաղաքապետը, բայց նահանգապետական այցելութիւնները չեն քաջալերում:

Շահը, իր առաջին անգամ Օղեստա եղած միջոցին, յաճախ է տեսնուէր փողոցում, կամ ձիու վրայ, կամ աւթօթիով և կամ կառքով: Նա այցելեց բոլոր գործարանները, մի օրաթերթ լրագրի տպարանը և տեսաւ մեքենան: Կանոնաւոր յաճախում էր օպերան և ներկայացումները: Ներկայ էլ լինում ձիարշաններին և իր անունով մի մրցանակ էր նշանակել ամենաազգ ձիուն: Բայց իր երկրորդ այցելութիւնից յետոյ, նա իրեն մեկուսացած է պահում, տխուր է և մեկամտ: Անգլիա դնալու և այնտեղ ապրելու իր նախնական մտադրութիւնը բաց է թողել: Շահը կանոնաւոր կերպով թղթակցում է իր կողմնակիցներին հետ Պարսկաստանում, և երբեմն էլ ընդունում է պատգամաւորներ Գիւմիշ-Թափէից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԵՆ
«ՀԱՄԵՐԱՇՆՈՒԹ. ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ»
ԽՅԲԱԿԻՆ

Գեղեցիկ խօսքերով շարահիստուած թուղթիկի մէջ, պարոններ, այնուամենայնիւ ձեզ չէր յաջողել թագցնելու ձեր միակ և ամենաառաջնակարգ նպատակը: Դուք չէք ցանկանում «Արամեան» դպրոցի ուսուցչական խմբում տեսնել անհատների պաշտօնավարելիս, որոնց հետ այս կամ այն հաշիւն ունիք: Առաջին երեսի վերջին պարբերութիւնը, անհ բովանդակութիւնը ձեր ամբողջ թուղթիկի Բայց այնուամենայնիւ դուք փաստաբանում էք: Մեր քաղաքի միւս դպրոցները «յառաջադիմական շաղի վրայ են կանգնած (???)», լուրջ քայլեր են արւում նոցա ուսումնական մակարդակը բարձրացնելու համար (!!!): Այսպիսի դպրոցը չինական պարսկաների մէջ է, ունի մի անդրջրհեղեղեան *) ծրագիր, եթէ այն էլ

*) Ժամանակ է այդ փոսած, մաշուած բառը մէջտեղից վերցնել, մարտիչներ: Արամեան դպրոցն ունի իր հաստատուն ծրագիրը, կազմուած արժանաւոր տեսուչ պ. Ար. Ալեքսանեանի օրով և յարմարեցուած ճեմարանի դասարանական ծրագրին: Ինչ որ չգիտէք և կամ չէք ուզում եղած տեսնել, չի նշանակում որ դա գոյութիւն չունի: Կրկնում ենք, փորձիչներ, Արամեան դպրոցն ունի իր ծրագիրը, որ կազմուած է երկար տարիներ պաշտօնավարած, փորձուած, ճեմարանական համարարանական ուսուցիչ-ուսանողների ձեռամբ, ընդ արթնով հսկողութեամբ արդիւնաւետ տեսուչ պ. Արեգիւնգովի:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄԲ «ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՍՈՒՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Մայիս 27-ին Արամեան դպրոցի սրահում մի խումբ կանանց նախաձեռնութեամբ տօնւեցաւ Մշակի քառասունամեակը:

Հանդէսը բացւեց պիանօյի նւագածութեամբ, ապա ճառախօսը Պ. Գեորգ Չիլինգարեանը նախ խօսեց Մշակի հիմնադիր Գրիգոր Արծրունու մասին, ծանօթացնելով հասարակութեան նրա կեանքի և գործնէութեան հետ: Ապա անցաւ Մշակի գործնէութեան ցոյց տալով նրա մեծ նշանակութիւնը, և թելելով թէ նա ինչպիսի մեծ դեր է խաղացել մեր հասարակական կեանքում: Խօսելով Մշակի գործնէութեան մասին, խօսեց նաև նրա ղեկավարների համար՝ մաղթելով յարատե գործնէութիւն և եռանդ նրա յաջորդներին: Ծառից յետոյ եղան նւագածութիւն պիանօի վրայ և մէջ ընդ մէջ նուագեցին օր. Լիզա, օր. Լուսիկ և օր. Մարգարիտ ղեկավարութեամբ օրիորդ Սօֆեա Ամատունու: Արտասանեց մի բանաստեղծութիւն օր. Լիտա որ անցաւ բաւականին յաջող: Օր. Հոսեփաիմէ Միրզոնը կարդաց մի կտոր հեղինակի աշխատութիւններից օրիորդների դաստիարակութեան մասին որի մէջ յարգոյ հեղինակը շնորհում է սխալ և միակողմանի դաստիարակութեան վատ հետեանքները, ցոյց տալով իսկական դաստիարակութեան և կրթութեան կարևորութիւնը:

Ընդհանուր առմամբ յօբելանը անցաւ շատ անշուք և սառը ինչպէս վայել չէր մի այդպիսի թերթի քառասունամեակին: Ինչպէս երևում էր յարգոյ ղեկավարները շանք չէին թափել աւելի լաւ, ըստ պատշաճի տօնել այդ մեծ մարդու աւելի ևս մեծ գործը: Անւանապէս միեան կարելի էր կոչել յօբելան: Պիանօի նուագածութիւնը շատ թույլ էր և նոյն իսկ անախորժ

ունի և այն, ձեզ ծանօթ ուղղութեամբ: Սակայն ազնւութեան նշոյն անգամ դուք չունէք: Դուք ամեն տեղ պատրաստ էք ճառելու ազնիւ պայքարից, ուղղամտութիւն քաղցրելու, սակայն դուք հէնց ձեր թուղթիկով ապացուցանում էք, որ ծուռ ու մուռ ճանապարհներով դիմում էք ձեր նպատակին, այն է՝ մի քանի անձնաւորութիւնների «Արամեան դպրոցի» ուսուցչական կազմից հեռացնելու: Այդ ի՞նչ անդրճրհեղեղեան ծրագրի մասին էք խօսում: Հնարաւոր է որ ցոյց տաք այդ ծրագիրը: Քաջութիւն ունի՞ք ազնւութեամբ խոստովանելու, որ ձեզանից և ոչ մէկը այդ ծրագիրը չէ տեսել, որ ձեզանից և ոչ մէկը Արամեան դպրոցով չէ հետաքրքրուել: Երբ, ի՞նչպէս և ճիշտեղ դուք ծանօթացաք նրա ծրագրի հետ և այդ եզրակացութեան յանգաք: Փաստն այն է, որի մէջ դուք ևս խորապէս համոզուած էք, որ երկու թաղային դպրոցների ծրագրերի մէջ ոչ մի առանձին աչքի դարձող տարբերութիւն չկայ: Ասացէք խնդրեմ, հապա ի՞նչպէս է որ Թիֆլիզի բազմաթիւ և միանգամայն առանձին վարչութիւն ունեցող ծխական դպրոցների աշակերտութիւնը տեղաւորում է ներսիւեան դպրոցում և առանց դժուարութեանց անցնում միմիայն 2. դասարան: Դուք կասէք որ Թիֆլիզի բոլոր ծխական դպրոցների ծրագրերը մէկ են,

խողութեան համար: Հանդէսը փակեց հայր սրբազանը մի փոքրիկ ճառով որի մէջ նա խօսեց Մշակի մեծ նշանակութեան մասին թուելով թէ նա ինչպիսի գոհաբերութիւններով կարողացել է պահպանել իւր գոյութիւնը քառասուն երկար ձիգ տարիներ: Ապա անցաւ նրա ղեկավարներին և աշխատակիցներին մաղթելով յարատե գործնէութիւն և անխնջ եռանդ, հասարակութիւնը ցըրուեց անգոհ տպաւորութեան տակ:*)

Թագուհի Գորոյեանց

ՄԵԶ ՀԵՏԱՄՏՈՒՄ ԵՆ

Խլուրդային գործնէութիւնը սրբազան նպատակ է մեր ուրոց կարգի հասարակական գործիչների համար: Ինչ խօսք, որ այդ նպատակին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չդնեն նոքա և ասպարէզ հանեն այնպիսի մարդիկ, որոնք ընդունակ են ամեն բանի և որոնք ոչինչ չունեն

*) Ուրախութեամբ և իբրեւ քաջալերութիւն տպում ենք մեր Արամեան և Մ. Աննայան դպրոցների նախկին ընթացաւարտ աշակերտուհի օր. Թ. Գորոյեանի այս գրութիւնը, պահելով ամեն ինչ նրանում անփոփոխ: Իհարկէ մենք չենք բաժանում մեր նախկին աշակերտուհու կարծիքները նուագածութեանց մասին, որ ըստ մեզ, բաւական յաջող էին: Այս յօդուածը լոյս պիտի տեսնէր №-14 «Միտք»-ում, սակայն յետաձգուեցաւ հոգաբարձական ընտրութեան տաք պայքարին վերաբերող այժմեական գրութեանց պատճառով: Ողջունելով մեր աշակերտուհու առաջին քայլը, կսպասենք նրա յաջորդ յօդուածներին էլ: Ան հասարակ մենք ուրախութեամբ տեղ կտանք մեր իրազեկան սեռի գրութեանց, եթէ անգամ դուք գրական շատ քիչ արժէք էլ ունենան: Ժամանակ է, որ մեր իրազեկան սեռը թողնի իւր մոռացուած գրութիւնը, թողնի իւր հարեմական վիճակը և ասպարէզ դառնալու ջանքեր չափով, և գրական աշխարհում:

Ծ. Խ.

կորցնելիք, եթէ կորուստ կամ վնաս պատճառեն ուրիշի:

Ի՞նչ կասէք հետեւեալ դէպքին: Կիրակի է: Յունիս 17-ը, Կենտրոնականում խօսում են պ. պ. Ս. Տէր կարապետեան, Եղբ. Թումանեանց հաշուանդահ Մնացականը և Վ. Վասիլեանը:

Մօտենում է խօսողներին Տաճկահայ ոմն Սեդրակ Թորոսեան և հարցնում Տէր կարապետեանին
—Ո՞ր է ձեր ընկերը.
— Ո՞վ.
—Այ Տէր Վարդանեանը:
— Ի՞նչ կայ որ:

—Անոր հետ հաշիւ ունինք փակելիք, ան զիս ծուխ չի ճանչնար (!): Ան ինչո՞ւ չի գար կենտրոնական:


Իհարկէ հեռացնում են այդ նախանձայրգին, ասելով որ Տէր Վարդանեանին երբ կամենայ նա կարող է իր տանը կամ այլուր գտնել:

Մենք այդ մարդու հետ մեր կեանքում ոչ մի խօսք, ոչ մի բառ փոխանակած չունինք և մեզ համար միանգամայն անհասկանալի է, թէ այդ թայֆայականը ինչից կամ ուժից դրդուած հետամուտ է մեզ:

Յիշում ենք նաև, որ երկու ամիս սրանից առաջ, երբ անցնում էինք լուսանկար Յովսէփ խանի տան մօտով, նոյն պարոնը մի ուրիշի դառնալով և ապա մեզ մատով ցոյց տալով՝ հարցրեց մօտի մարդուց.

—Ա՛ս է «Մտքի» խմբագիրը, հա, լաւ:

Այս և ամեն կարգի մեզ հետ հաշիւ և ինքի ունեցողներին հասկանալու համար՝ մեզ մնում է դիմել մեր կառավարութեան և ապահովել մեր շրջապատը: Այդպէս և կ'աւարտենք մենք:



դուք համերաշխութիւնը կվիժեցնէք: Համերաշխութիւն, սքանչելի գաղափար, որը կիրականանայ միայն եթէ ձեզանից իւրաքանչիւրը իւր ետին աւելի փոքր տեղ տայ և հասարակական կեանքի ասպարիզում չցանկանայ իւր այս կամ այն հաշիւը մաքրել *): Ի՞նչ չու այդ զօրեղ ու միտումաւոր կրեմիական միայն մեր թաղի ձեր աչքի փուշ դպրոցի շուրջն է տեղի ունենում: Անաչառ պարոններ, խօսեցէ՛ք, ձայն բարձրացրէ՛ք ձեր կենտրոնական դպրոցի գերեզման տեսչի և նրա ջանքերով «բարձրացրուած» դպրոցի մասին. ինչո՞ւ էք լուռ, ո՞ր է ձեր սրտացաւութիւնը այս դէպքում: Ի՞նչ է ձեր «կազմամայ դպրոցը»: Ձեր ո՞ր երեսաների անունիցն էք խօսում: Բոլորիդ անձնապէս մի առ մի ճանաչում ենք: Բոլորիդ հոգեբանութիւնը մեզ քաջ ծանօթ է: Ի՞նչու նախօրօք համերաշխութիւնը պայմանաւորում էք ձեր մարդկանց ընտրութեամբ. թողէ՛ք հասարակութիւնը ինքնին հոգաբարձական մարմին ընտրի իւր դպրոցների համար և ապա համերաշխութեան յորդորներ կարդացէ՛ք: Բայց այդ դուք

*) Կենտրոնականի բացման 1 աւարում երեք դպրոցների ուսուցիչներից խառն ժողովներ եղան. ի վերջոյ փախչողները և գործը—համերաշխութիւնը—վիժեցնողներն էլ իւրաւայականները եղան, երբ տեսան որ իրենք նսեմանում են և կրօնի չգասաւանդելու խնդիրը չի իրականանում: Ծ. խ.

Լ ՈՒՐԵՐ

ԹԱԽԻԶ

Յարգող դր. Ասրամեանը յայտնում է մեզ, որ Աղբատանամը շնորհակալութեամբ ստացել է հանգուցեալ Անտոն խանի ժառանգների կտակակատարներից 20 թիւ. 3 թիւ. էլ ստացուել է տիկին Հելեն Ժորժից:

Ասրամեան դպրոցի մանկական գրադարանը շնորհակալութեամբ նուէր է ստացել:

1) Ծառուր խան Միրզէն Սէփ-խանեանից ընդհ. աշխարհագրութեան մի բառարան անգղերէն լեզուով:
2.) Բագուից, հեղինակ պ. Տ. Տէր Գրիգորեանից՝ «Ձեռնարկ Հայոց պատմութեան» հին դար. 1912 թ. գինն է 50 կոպ.

3.) Դաւազիրը «Ընդհանուր պատմութեան» 1. մասն կազմեցին՝ Ս. Գրիգորեան և Մ. Զառաֆեան. Բագու 1912 թ. գինն է 75 կոպ.

Ասրամեան դպրոցի այս տարուայ մանկավարժական ժողովը որոշել է պարգևատրել իւր սաներից Տէր Օհանեան Հրաչիկին և Մելիք Արեւմեան Հեղինէին իրենց գերազանց վարքի և ուսման մէջ դերազանցապէս առաջադէմ լինելու համար: Տրուեցաւ նոցա սեղանի զարդ թանաքաման և գրչակալ:

Անցեալ կիրակի Լիւաւայում եղել է հաշուեքննիչ յանձնաժողովի գեկուցումը և հոգաբարձական ընտրութիւն: Ժողովին նախագահել է թեմական խորհրդի անդամ-քարտուղար պ. Ն. Տէր Յովհաննիսեանը: Զարմանալի տեղատուութիւն թայֆայի միջնորդութեամբ Մի ժամանակ այդ պարոնը գլխապատու հաղիւ իրեն, նախկին ընտրութիւններին, աստիճաններից մի կերպ մագապուրծ ազատելով տուն է քցել իսկ այժմ շնորհիւ ժողովրդի՝ խաղաղ նախագահում է:

Մեզ հաղորդում են որ ժողովը անցել է խաղաղ. զի դրամ չլինելով՝ թայֆան այլևս չէր բերել իր պահեստի գնդերը և թողել էր, որ աղաներն ընտրուելով մի կերպ առաջիկայ Սեպտեմբերին, թերեւ, կարողանան դպրոց բացել, որով այլևս իրենց աւերն ու խայտառակութիւնը այնքան աչքի չի ընկնի: Յանձնախումբը խիստ աննպաստ է արտայայտուել, բացառութեամբ պ. Մնացականի, հոգաբարձութեան հասցէին, որ ոչինչ չէր արել, չէր ունեցել ժողովներ, արձանագրութիւններ և ուսուցիչներն են եղել հոգաբարձական պաշտօն կատարողները:

Հատարուել է այնպիսի վարպետ ընտրութիւն, որ եթէ աղաներից մի քանիստ հրաժարուեն, և ամենայն հաւանականութեամբ կհրաժարուեն, նըրանց տեղն անցնեն կանդիդատները, որոնք կենտրոնականի Լիւաւաբընակ հոգաբարձուներից են: Բացառութեան պէտք չկայ: Խեղճներ պէտքէ հասկանան թէ դա ինչ փոխիքիայ է: Նման փոխիքիայ ևս խաղացուած է Դալայի դպրոցների շուրջը: Անշուշտ Դալայից նրանց մի լաւ քիթ կանեն: Փոխիքիայիներն երբ առատ-առատ կերան և վերջացրին Լիւաւի դրամները, նոր ապա հիմի սկսեցին խօսել «խնայողութիւնից» և «համեմաշխու-

թիւնից»: Հապա ուրիշ ինչ կերպ տեղաւորեն իրենց «հայկարան» ղեկավարին Դալայի և Լիւաւայի տեսչական չաղ պաշտօնում:

Հետեւում է, որ Ծանոթմանների դէմ գնացած Սարգար Ռաշիդը եղած ընդհանրութեանը կրել է անյաջողութիւններ: Ծանոթմանները գործում են շատ եռանդով, զինուած են նոր սիւստեմի հրացաններով և շատ աւելի բազմաթիւ են: Կառավարականները կրում են հին ձեւի և ժանգոտած վարանդիներ:

Յունիս 10-ին ամենայն հայոց կաթողիկոսին Պետերբուրգում այցելութիւն տուին միաստանների խորհրդի նախագահ Կոկովցեւը և ներքին գործերի միաստար Մակարովը: Ապա կաթողիկոսը բազմ է ունեցել ներկայանալ իր շքանշանով Կայսեր և ողորմածաբար ստացել է վեղարի ադամանդեայ խաչ: Ունեցելութիւնը տեւել է 20 րոպէ: Բարձրագոյն առաջարկուել է թէյ: Հնդուներութիւնը եղել է շատ սիրալիր:

Պ Օ Ս Ս Ա Ր Կ Ղ

Թաւրիզի մեր բաժանորդներին որոնք ապառիկ ունենալարոններ, չորս ամիսը լրացել է արդէն և դեռ 14 ղուանի չնչին գումարի աննշան բաժանորդները դուք չէք վճարել: 100 տարի է մեր մէջ մամուլ գոյութիւն ունի և գիտէք որ բաժնեգիր կանխիկ է վճարում: Որքան սպասեք և քանի՞ անգամ գանձողին ուղարկեք դրամի և էլ լսեք ձեր պատասխանը. «վաղը եկէք» կամ «յետոյ կուղարկենք»: Մեզնից թղթավաճառ, տպարանատէր, ցրիչ, փոստ և այլն կանխիկ և առանց ժամանակ տալու առնում են, մենք որ ոչ ապահով վաճառական ենք և ոչ էլ դրամատէր, վաղուց սպասում ենք ձեր չնչին բաժնեգրներին: Պարտաճանաչութիւնը աղնիւ բան է: Նոյնը ասում ենք և մեր օտար քաղաքների պ. պ. բաժանորդներին, որոնց դրամները վաղուց և հրամայաբար օր առաջ արդէն մեզ հասած պիտի լինէին:

«Շաբաթ օրը, կամ ամսագլխին եկէք» խօսքերը միթէ այս 4 ամսում չվերջացան: Մեզ համար անհասկանալի է այդքան զոդողալը ինչ որ մի 14 ղուանի վրայ, այն էլ դեռ 4 ամիս թերթը ձրի կամ ապառիկ ստանալուց յետոյ:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՆ ԵՆ

Մարտում պ. Յ. Տր. Վարդանեանը Ուրմիում « Ա. Միրզաշանեանը Ատառում « Ա. Բժշկեանը Ռէշում « Մ. Պատմագրեանը Էնդէլիում « Բ. Մկրտչեանը Դաղւնում « Ա. Տ. Յակոբեան Թէհրանում « Պ. Միքայէլեանը Սպահանում « Ն. Դաւթեանը:

Խնդրում ենք մեր բաժանորդներին շտապեն իրենց բաժնեգրները յանձնել վերջիշեայներին, րոպէ առաջ մեզ հասցնելու համար:

Խմբագիր հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅՈՒԷԼ Ե ԲԱՆԱԲԱՅԻՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՅՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԲՈՒՇԱՐԱՆ (Լէշէրնիցա)

Արժէքները չափազանց մատչելի են: Աղբատները բշկուում են բոլորովին ձրի: Հիւանդներ ընդունում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

МАГАЗИНЪ ПАРИЖЪ
MAGAZINS DE PARIS-TABRIZ.
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN



ՓԵՐԻՉ ՄԱՅԵԱՅԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ

ՓԷՇՆԵՐ ԵՒ ԻՒՊԿԱՆԵՐ

ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ

ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳՆԻ ՊԱՏԻՍՏՆԵՐ

ՕՋԱԿՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ

ԵՒ ԽԻՍՏ ԱԺԱՆ

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ


Նշանդրէքի և հարսանեաց բոմբօններ և շիրիններ, կանացի բաթիսթեաց զգեստներ, տղամարդկանց անգլիական հրաշալի կտորներ:

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍՍԿ ԲԺՇԿԵԱՆԻ)



Նոր ստացւել են ՄԵՏԱԲԱՅԻՆ ԲՆՏԻՐ ԲԼՈՒԶՆՈՒՆԵՐ, ՍՊԵՏԿ ԼԵՒ ՔԵԹՆԵՆԵՐ, տղամարդկանց ԿՈՑՑ ԳԼՈՒԿՆԵՐ, ԵՐԳԻՏԵՐ ՎԵՐՏԵՆԻՆԵՐ, ճաշակաւոր ԳԼՈՒԶՆՈՒՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ:
Հնդուներով եՐԵՐԸ ՍԵՑԼԵՆՈՒՆԵՐԻ ԸՈՒՆՏԵՐՆԵՐ ՏԵՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատէշները: Պատէշներ կարելի է առլ 50000 հատից սկսած. իրեն կանխավճար վերցնում ենք 100-ին 150 | 0 զնեքը հաշւում ենք գործարանի հաշւով, ցանկացողները կարող են վերցնել պրէսկուրանտ:



ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стационарный приём-больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.

Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги, принимаются бесплатно

Завѣдующій больницей докторъ Ваганъ Геворковъ

این روزها شروع کرده‌ایم به معالجه هر قسم مرضای مقیم و غیر مقیم را هر روز پذیرای خواهد شد در مریضخانه از دو ساعت بظہر ماندہ الی ظہر و مرضای بی‌بظاعت ہرکاه از بکریکی کری نوشته یابورند مقیم و غیر مقیم مجاناً بہ کمال مواظبت و اہتمام معالجه خواهد شد مدیر مریضخانه دکتر و اہان کوریکیان

Դ Օ Ք Տ Օ Ր Ս Ա Ր Գ Ի Ս Ր

Ամեն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի խփում է աղբատների և չքաւորների երեխաների ծաղիկները: